ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի անտառային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. Օրենսգրքի կարգավորման առարկան.

1. Սույն Օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Օրենսգրքի նպատակն է բնական միջավայրին համապատասխան անտառների կառավարումը, անտառային տարածքների հետևողական ընդլայնումը, անտառային պաշարների բնական, շարունակական և անսպառ օգտագործումը:»

Հոդված 2. Օրենսգրքի 3-րդ հոդվածում՝

1. «անտառ», «անտառային պաշար», «անտառային տնտեսության վարում», «անտառվերականգնում», «ծառուտ», «խնամքի (միջանկյալ) հատումներ» հասկացությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«անտառ՝ անկախ հողի նպատակային նշանակությունից անտառկազմող ծառաթփային բուսականության գերակշռությամբ կենսաբանական բազմազմազանության ու բնական միջավայրի բաղադրիչների փոխադարձորեն կապված և միմյանց վրա փոխազդող ամբողջությամբ բնական համալիր/օբյեկտ.»,

«անտառային պաշար՝ բնափայտի, բույսերի, անտառներում վերարտադրվող այլ անտառանյութի, կենդանական աշխարհի ամբողջականություն.»,

«անտառային տնտեսության վարում՝ անտառկառավարման պլանների հիման վրա իրականացվող անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և կայուն անտառօգտագործման կազմակերպչական ու տեխնիկական համալիր միջոցառումներ.»,

«անտառվերականգնում՝ անտառազրկված տարածքների և քայքայված ցածր լրիվության անտառների վերականգնում ցանքի, տնկման և բնական վերաճին օժանդակման միջոցով.»,

«ծառուտ՝ միանման հիմնական անտառգնահատման ցուցանիշներով ծառերի ամբողջականություն, որը հանդիսանում է անտառի հիմնական բաղադրիչը.»,

«խնամքի հատումներ՝ գլխավոր անտառկազմող ծառատեսակի աճին խոչընդոտող կամ աճի տեմպերով հետ ընկած ծառերի հատում, որի նպատակն է բարձր արտադրողականությամբ և դիմադրողականությամբ ծառուտ ձևավորելը.»,

«սանիտարական հատումներ՝ անտառների սանիտարական վիճակի բարելավման նպատակով հրդեհների, վնասատուների, հիվանդությունների և այլ բացասական ներգործության հետևանքով կենսունակությունը կորցրած կամ ցցաչոր և չորացած ծառերի հատումներ.»:

2. Լրացնել նոր հասկացություններ հետևյալ բովանդակությամբ.

1) «անտառածածկ տարածք՝ որի նվազագույն մակերեսը կազմում է 0.1 հեկտար, նվազագույն լայնությունը՝ 10 մետր, և որտեղ անտառկազմող ծառաթփատեսակների սաղարթը ծածկում է տվյալ տարածքի առնվազն 30 տոկոսը»,

2) «անտառի գործառնական նշանակություն՝ անտառի կառավարման ուղղությունների տարանջատում և հստակեցնում.»,

3) «տապալված ծառուտ՝ բնական երևույթների այլ բացասական ներգործությունների հետևանքով համատարած արմատախիլ և/կամ գետնատապալ ծառերով անտառային տարածք.»,

4) «հատատեղ՝ հատկացված անտառածածկ տարածք, որտեղ հատումներն իրականացվում են անտառկառավարման պլանի համաձայն կամ անտառպաթոլոգիական հետազոտության արդյունքում կամ այլ հատումների նպատակով.»:

3. Հանել՝ «անտառային տնտեսություն վարող անձ», «անտառային արդյունք», «անտառային ռեսուրս», «անտառօգտագործման վճարներ», «երկրորդական անտառանյութ», «կենսատոպ», «կենսաբանական բազմազանություն», «հատման տարիք», «ոչ անտառածածկ տարածք» հասկացությունները:

4. «անտառների պետական հաշվառում» հասկացությունից հանել «հինգ տարին մեկ անգամ» բառերը:

5. «անտառային հողեր» հասկացությունում անտառապատ» բառը փոխարինել «անտառածածկ» բառով:

6. «անտառաշինության նախագիծ (անտառկառավարման պլան)» բառերը փոխարինել «անտառկառավարման պլան» բառերով:

7. «անտառահատման տոմս» հասկացությունում հանել «և երկրորդական անտառանյութ» բառերը:

8. «անտառային տոմս» հասկացությունում «կողմնակի անտառօգտագործման» բառերը փոխարինել «ոչ բնափայտային անտառանյութի օգտագործման» բառերով:

9. «անատառապատում» հասկացությունում «ոչ անտառածածկ» բառերը փոխարինել «անտառով չծածկված» բառերով:

10. «թափուկ» հասկացությունում «կամ բներ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև երեք տարուց ավելի վաղեմությամբ տապալված ծառեր:» բառերը:

11. «այլ հատումներ» հասկացությունում «անտառային տարածքների մաքրում» բառերը հանել:

Հոդված 3. Օրենսգրքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 5-րդ մասով՝
«5. Հայաստանի Հանրապետությունում բոլոր անտառները և անտառային հողերը, անկախ սեփականության ձևից, կազմում են Հայաստանի Հանրապետության անտառային ֆոնդը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 5-րդ հոդվածի

1. 1-ին մասի զ) ենթակետն ուժը կորցրած ճանաչել:
2. 2-րդ մասի՝

1) գ), դ), ը) կետերն ուժը կորցրած ճանաչել,

2) 2-րդ մասի բ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) անտառկառավարման պլանների պատվիրումը և դրանցով նախատեսված միջոցառումների իրականացումը.»,

3) զ) կետում «հակահրդեհային» բառը փոխարինել «հրդեհային» բառով,

4) է) կետում հանել «պետական» բառը, իսկ «հայտնաբերումն ու կանխարգելումը» բառերը փոխարինել «հայտնաբերման և կանխարգելման ապահովումը» բառերով:

3. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության պետական անտառային կադաստրի վարման և անտառային հողերի պետական հաշվառման նպատակով անտառների և անտառային հողերի սեփականատերերն անտառների կայուն կառավարման ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնին տրամադրում են տվյալներ, կամ հնարավորություն են ընձեռում դրանք հավաքագրելու համար:»:

Հոդված 5. Օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Անտառների կայուն կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

1. Անտառների կայուն կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

1) պետական անտառների տնօրինումը՝ սույն օրենսգրքի և այլ իրավական ակտերի համաձայն,

2) պետական քաղաքականության իրականացման ապահովումը,

3) պետական ծրագրերի հաստատումը,

4) պետական և համայնքային անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգի սահմանումը,

5) անտառկառավարման պլանների մշակման և հաստատման կարգի սահմանումը,

6) խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգի սահմանումը,

7) պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման և անտառային տարածքներին հասցված վնասի փոխհատուցման կարգի սահմանումը,

8) պետական և համայնքային անտառներում և անտառային հողերում ոչ բնափայտային անտառանյութի օգտագործման կարգի սահմանումը,

9) պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգի սահմանումը,

10) պետական անտառների հավատարմագրային կառավարման մրցույթի անցկացման կարգի սահմանումը,

11) պետական սեփականություն համարվող անտառների և անտառային հողերի վարձավճարի նվազագույն չափի սահմանումը,

12) պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման, առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվների սահմանումը,

13) սահմանային և ռազմական նշանակության անտառների և անտառային հողերի օգտագործման կարգի սահմանումը,

14) սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 7. Անտառների կայուն կառավարման և վերահսկողության ոլորտում պետական լիազորված մարմինների իրավասությունները

1. Անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական կառավարման լիազորված մարմին) իրավասություններն են՝

1) պետական անտառների տիրապետումը և օգտագործումը՝ սույն օրենսգրքի և այլ իրավական ակտերի համաձայն,

2) պետական քաղաքականության մշակումը և իրականացումը,

3) պետական անտառներում վերահսկողության իրականացումը,

4) անտառային հողերն ըստ հողատեսքերի փոփոխության առաջարկությունը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը,

5) պետական անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և օգտագործման, ինչպես նաև անտառային պաշարների արդյունավետ օգտագործման պետական ծրագրերի մշակումը և դրանց իրականացման ապահովումը,

6) Հայաստանի Հանրապետության պետական անտառային տնտեսությունների վարման կազմակերպումը,

7) անտառկառավարման միջոցառումների իրականացման տարեկան գործողությունների պլանների հաստատումը,

8) անտառկառավարման միջոցառումների իրականացման տարեկան գործողությունների պլանների մշակման և հաստատման կարգի սահմանումը,

9) անտառվերականգնման և անտառապատման նախագծերի մշակման և հաստատման կարգի սահմանումը,

10) անտառվերականգնման և անտառապատման իրականացման կարգի սահմանումը.

11) պետական և համայնքային անտառային հողերում տնկադաշտերի հիմնման կարգի սահմանումը,

12) անտառներում հողի շերտի հանքայնացման կարգի սահմանումը,

13) անտառսերմնային և տնկարանային տնտեսության վարման կարգի սահմանումը,

14) անտառտնկարկներն անտառի շարք փոխադրելու կարգի սահմանումը,

15) պետական և համայնքային անտառներում բնափայտի մթերման կարգի սահմանումը,

16) Հայաստանի Հանրապետության պետական անտառային կադաստրի վարումը, անտառային հողերի պետական հաշվառումը,

17) պետական անտառներում բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղի հաստատումը,

18) անտառների մոնիթորինգի իրականացման ապահովումը,

19) անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական, պայթեցման, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ հաղորդակցուղիների անցկացման, հորատման և այլ աշխատանքների կատարման նպատակով հողերի նպատակային նշանակության փոփոխման, ինժեներաերկրաբանական հետազոտությունների իրականացման համար թույլտվության տրամադրումը,

20) 10 և ավելի հա մակերես ունեցող համայնքային և մասնավոր անտառների անտառկառավարման պլանների հաստատումը և դրանցով նախատեսված միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողության սահմանումը,

21) պետական անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և անտառօգտագործման հարցերին առնչվող անտառային տնտեսություն վարող կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների քննարկումը և հաստատումը,

22) անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերարականգնման, անտառապատման և օգտագործման աշխատանքները, ինչպես նաև՝ անտառային սելեկցիայի և անտառային սերմնաբուծության ոլորտում գիտատեխնիկական զարգացման ուղղությունների սահմանումը,

23) իր կառավարման ներքո գտնվող պետական անտառների և անտառային հողերը վարձակալության իրավունքով տրամադրելու, ինչպես նաև հավատարմագրային կառավարման հանձնելու հրապարակային սակարկությունների կազմակերպումը,

24) պետական անտառների անտառկառավարման պլանները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը,

25) անտառտնտեսության միջոցառումների իրականացման և դրանց որակի նկատմամբ հսկողության սահմանումը,

26) անտառվերականգնման, անտառապատման, տնկադաշտերի և տնկարանների հիմնադրման նախագծերի հաստատումը,

27) անտառհատման և անտառային տոմսերի օրինակելի ձևերի և դրանց տրամադրման կարգի սահմանումը,

28) անտառների կայուն կառավարման բնագավառում միջազգային համագործակցության իրականացումը,

29) անտառային օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության սահմանումը.

30) սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 8. Անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունները

1. Անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման տարածքային մարմինների իրավասություններն են՝

1) մասնակցությունը պետական և համայնքային անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և օգտագործման ծրագրերի մշակմանը և դրանց իրականացման ապահովմանը մարզի վարչական տարածքում,

2) մինչև 10 հա մակերես ունեցող համայնքային և մասնավոր անտառների անտառկառավարման պլանի հաստատումը և դրանցով նախատեսված միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողության սահմանումը,

3) անտառների և անտառային հողերի պահպանության և օգտագործման նպատակով պետական ծրագրերի իրականացման մասնակցությունը,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 9. Անտառների կայուն կառավարման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները

1. Անտառների կայուն կառավարման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն են՝

1) համայնքային անտառների տիրապետումը, օգտագործումը, տնօրինումը և անտառային տնտեսության վարումը՝ սույն օրենսգրքի համաձայն,

2) պետական և համայնքային անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և օգտագործման, ինչպես նաև անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրերի մշակման և դրանց իրականացման մասնակցությունը, իրենց վարչական տարածքում՝ օրենքով սահմանված կարգով,

3) անտառային հրդեհների մարման աշխատանքներին մասնագիտացված ծառայությունների և բնակչության ներգրավումը,

4) համայնքի կառավարմանը հանձնված պետական անտառների կառավարման ապահովումը,

5) համայնքային անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական, պայթեցման, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ հաղորդակցուղիների անցկացման, հորատման և այլ աշխատանքների կատարման նպատակով հողերի նպատակային նշանակության փոփոխման, ինժեներաերկրաբանական հետազոտությունների իրականացման համար համաձայնության տրամադրելը,

6) մինչև 10 հա մակերես ունեցող համայնքային անտառների և անտառային հողերի անտառկառավարման միջոցառումների իրականացման տարեկան գործողությունների պլանների հաստատումը և մեկ օրինակը պետական կառավարման լիազորված, իսկ մյուս օրինակը՝ պետական կառավարման տարածքային մարմիններին տրամադրելը,

7) 10 և ավելի հա մակերես ունեցող համայնքային անտառների անտառկառավարման պլանները պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանը ներկայացնելը: Հաստատվելուց հետո մեկ օրինակը պետական կառավարման տարածքային մարմիններին տրամադրելը,

8) մինչև 10 հա մակերես ունեցող համայնքային անտառների անտառկառավարման պլանները պետական կառավարման տարածքային մարմիններին, տարածքային կառավարման մարմինների հաստատմանը ներկայացնելը և մեկ օրինակը պետական կառավարման լիազորված մարմնին տրամադրելը,

9) իր կառավարման ներքո գտնվող համայնքային անտառների և անտառային հողերը վարձակալության իրավունքով տրամադրելու, ինչպես նաև՝ հավատարմագրային կառավարման հանձնելու հրապարակային սակարկությունների կազմակերպումը,

10) համայնքային անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և անտառօգտագործման հարցերին առնչվող համայնքային անտառային տնտեսություն վարողների ներկայացրած հաշվետվությունների քննարկումը և հաստատումը,

11) անտառի պետական մոնիթորինգ, ինչպես նաև կադաստրի վարում և պետական հաշվառում իրականացնող անձանց համայնքային անտառային տարածք մուտք գործելու հնարավորության ընձեռումը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 4-րդ գլխի վերնագիրը և 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 4

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. Անտառների և անտառային հողերի՝ ըստ գործառնական նշանակության դասակարգումը

1. Հայաստանի Հանրապետությունում անտառները և անտառային հողերն ունեն բազմագործառնական նշանակություն, որոնցից ոչ մեկը չի դիտարկվում իբրև գերիշխող, և դրանք կատարում են էկոհամակարգային ծառայություններ:

2. Հայաստանի Հանրապետությունում անտառները և անտառային հողերն ըստ գործառնական նշանակության դասակարգվում են՝

1) պաշտպանական նշանակության, որոնք ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, ջրակարգավորիչ խնդիրներ, ինչպես նաև՝ բարձր թեքության (30 աստիճանից ավելի) վրա գտնվող անտառները, անտառների վերին և ստորին սահմանների 200 մետր լայնությամբ տարածքը, բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակա անտառները՝ 100 մետր շառավիղով,

2) սոցիալ-մշակութային նշանակության, որոնք ունեն առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության կազմակերպման, մշակութային վայրերի, սանիտարական գոտիների պահպանության խնդիրներ, ինչպես նաև՝ քաղաքային և քաղաքամերձ անտառները, գյուղատնտեսական նշանակության հողերին հարակից (մինչ 100 մետր հեռավորության վրա գտնվող անտառները),

3) հատուկ նշանակության, որոնք ունեն ճանապարհների և ենթակառուցվածքների պահպանության խնդիր, ինչպես նաև՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված, սահմանային, ռազմական նշանակության, պատմական և գիտական արժեք ներկայացնող անտառները:

2. Անտառների գործառնական նշանակությունը սահմանվում է անտառկառավարման պլաններով, բազմագործառնական գոտիավորման միջոցով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածներն ու 5-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենսգրքի 6-րդ գլխի վերնագիրը և 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 6

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԸ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

Հոդված 16. Անտառային ֆոնդի պետական հաշվառումը և անտառային պետական կադաստրը

1. Անտառային ֆոնդի պետական հաշվառումն իրականացվում է անտառային ֆոնդի պահպանության, պաշտպանության կազմակերպման, անտառների վերականգնման և անտառապատման, անտառօգտագործման, անտառային ֆոնդի որակական և քանակական փոփոխությունների համակարգված հսկողության իրականացման, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, շահագրգիռ իրավաբանական անձանց և քաղաքացիներին՝ անտառային ֆոնդի մասին տեղեկատվություններով ապահովելու նպատակով:

2. Անտառային պետական կադաստրն անտառային ֆոնդի քանակական և որակական վիճակի, սեփականության և այլ գույքային իրավունքների ու դրանց սահմանափակումների, իրավական ռեժիմի վերաբերյալ տեղեկությունների համակարգ է, որն անհրաժեշտ է

անտառային տնտեսության վարման և տնտեսական գործունեության արդյունքների գնահատման համար: »:

Հոդված 9. Օրենսգրքի 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ և 22-րդ, հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Անտառային տնտեսության վարման սկզբունքները

1. Անտառային տնտեսության վարման հիմնական սկզբունքն անտառի կայուն կառավարման ապահովումն է:

2. Հայաստանի Հանրապետությունում անտառային տնտեսության վարումն իրականացվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում գործող կազմակերպությունների, իրավաբանական անձանց, քաղաքացիների և հավատարմագրային կառավարիչների միջոցով (այսուհետ՝ անտառային տնտեսություն վարող):

3. Անտառները և անտառային հողերը կամ դրանց մի հատվածը, որոնք ընդգրկված են բնության հատուկ պահպանվող տարածքներում, առանձնացվում են անտառային տնտեսություն վարողների կողմից և կառավարվում՝ սույն Օրենսգրքով և բնության հատուկ պահպանվող տարածքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 19. Անտառային տնտեսության վարման իրականացումը

1. Անտառային տնտեսության վարման նպատակով անտառաշինության ընթացքում կազմվում են անտառկառավարման պլաններ, որոնք ներառում են նաև անտառների բազմագործառնական գոտիավորումները և նախատեսում են անտառային տնտեսության վարման ընթացքում իրականացվելիք միջոցառումները:

2. Անտառկառավարման պլանները հաստատվելուց հետո համարվում են անտառային տնտեսության վարման երկարաժամկետ պլանավորման պարտադիր տեխնիկական փաստաթղթեր:

3. Անտառկառավարման պլանների հիման վրա մշակվում են անտառկառավարման միջոցառումների իրականացման տարեկան գործողությունների պլանները:

4. Անտառկառավարման միջոցառումների իրականացման տարեկան գործողությունների պլանները հաստատվելուց հետո համարվում են անտառային տնտեսության վարման ընթացիկ (կարճաժամկետ) պլանավորման պարտադիր տեխնիկական փաստաթղթեր:

5. Անտառային տնտեսություն վարողներն անտառօգտագործողներին տալիս են անտառահատման կամ անտառային տոմսեր, ինչպես նաև նրանց հետ կարող են կնքել անտառօգտագործման պայմանագրեր:

Հոդված 20. Անտառային հողերում անտառային տնտեսության վարման հետ չկապված աշխատանքների իրականացումը

1. Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական, քանդման ու պայթեցման աշխատանքների, ինժեներաերկրաբանական հետազոտությունների, մալուխների,

խողովակաշարերի և այլ կոմունիկացիաների անցկացման, հորատման և այլ աշխատանքներն իրականացվում են պետական կառավարման լիազորված մարմնի տրված համաձայնության հիման վրա, իսկ համայնքային անտառային հողերում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված համաձայնության հիման վրա: Համաձայնությունը տրվում է օրենքով սահմանված կարգով, բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում:

2. Պետական և հայնքային անտառներում և անտառածածկ տարածքներում արգելվում է բաց եղանակով հանքավայրերի շահագործումը:

Հոդված 21. Անտառների և անտառային հողերի պահպանությունը

Անտառային տնտեսություն վարողները միջոցառումներ են ձեռնարկում անտառներում ապօրինի գործողությունների հայտնաբերման ուղղությամբ՝ ապօրինի հատումների, ծառերի, թփերի, երիտասարդ տնկարկների և անտառային մշակույթների վնասման և ոչնչացման, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, կեղտաջրերով, կոմունալ-կենցաղային թափոններով անտառների աղտոտման և անտառային օրենսդրության այլ խախտումների հայտնաբերման ու կանխարգելման գործում, պահպանում են անտառներում և այլ բուսածածկ տարածքներում հրդեհային անվտանգության կանոնները, իսկ սույն օրենսգրքով սահմանված պահանջների խախտման դեպքում՝ տեղյակ պահում լիազորված մարմիններին:

Հոդված 22. Անտառների և անտառային հողերի պաշտպանությունը

1. Անտառի պաշտպանությունն իրականացվում է անտառի սեփականատերերի կամ անտառային տնտեսություն վարող անձանց կողմից անտառները վնասակար օրգանիզմների զանգվածային բազմացումներից, ինչպես նաև՝ բնական այլ վնասակար ազդեցություններից պաշտպանելու նպատակով:

2. Անտառների պաշտպանությունը ներառում է հետևյալ միջոցառումների իրականացումը.

1) անտառապաթոլոգիական ուսումնասիրություններ,

2) անտառի վնասատուների ու հիվանդությունների կանխարգելում,

3) սանիտարական հատումներ:

3. Անտառապաթոլոգիական ուսումնասիրություններն իրականացվում են վնասատուների ու հիվանդությունների զարգացման, տարածման օրինաչափությունները պարզաբանելու, վնասակարության կանխարգելման արդյունավետ միջոցառումների նախագծերի մշակման ու իրականացման նպատակով:

4. Անտառապաթոլոգիական ուսումնասիրությունների միջոցով գնահատվում է անտառների սանիտարական վիճակը, որոշվում են հիվանդ, չորացող և չորացած ծառերի քանակը, սանիտարական հատումների անհրաժեշտությունը և դրանց ծավալները:

5. Անտառի վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելման աշխատանքներում կիրառվում են անտառային էկոհամակարգերի և շրջակա միջավայրի

նկատմամբ նվազագույն բացասական ազդեցություն ունեցող մեխանիկական, կենսաբանական և քիմիական պայքարի մեթոդները և եղանակները, նախապատվություն տալով՝ վնասատուների ու հիվանդությունների վնասակարության կանխարգելման կենսաբանական եղանակներին:

6. Սանիտարական հատումները կատարվում են անտառների սանիտարական վիճակի ապահովման և բարելավման նպատակով հրդեհված, չորացած, ցցաչոր, հիվանդություններով և վնասատուներով վարակված, ինչպես նաև բնական երևույթների բացասական ներգործությունների հետևանքով քամատապալ, գետնատապալ, ձյունակոտոր կենսունակությունը կորցրած ծառերի հատման միջոցով:»:

Հոդված 10. Օրենսգրքի 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենսգրքի 28-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 28. Անտառվերականգնումը և անտառապատումը

1. Անտառի սեփականատերերը և անտառային տնտեսություն վարողները անտառվերականգնման միջոցառումների շնորհիվ ապահովում են անտառային ֆոնդի տարածքում հատատեղերի, այրված և այլ պատճառներով ժամանակավոր ծառազրկված, քայքայված, նոսրացված անտառների ժամանակին վերականգնումը, ինչպես նաև օժանդակում են անտառների բնական վերաճին, տեսակային կազմի բարելավմանը, արտադրողականության բարձրացմանը, անտառային ֆոնդի հողերի արդյունավետ օգտագործմանը և անտառների քանակական պահպանությանը:

2. Հատատեղերի, այրված և այլ պատճառներով ծառազրկված անտառային հողերը, որոնց վրա միջավայրի պայմանները չեն խոչընդոտում անտառային մշակույթների հիմնմանը, անտառվերականգնումը պետք է իրականացվի անտառային ֆոնդի տվյալ հողերն առաջանալու պահից՝ եռամյա ժամկետում:

3. Անտառավերականգնման աշխատանքների ծավալների և ձևերի ընտրությունը, ինչպես նաև այդ աշխատանքների համար տնտեսապես արժեքավոր ծառատեսակների ընտրությունը կատարում են անտառի սեփականատերերը և անտառային տնտեսություն վարողները՝ անտառկառավարման պլանների հիման վրա, անտառվերականգնման և անտառապատման կարգի համաձայն՝ նախապես ունենալով անտառվերականգնման նախագիծ:»:

Հոդված 12. Օրենսգրքի 29-րդ, 30-րդ և 31-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 10

ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հոդված 32. Անտառօգտագործման տեսակներն անտառներում և անտառային հողերում

1. Առանց անտառային էկոհամակարգին վնաս հասցնելու՝ անտառներում և անտառային հողերում կարող են իրականացվել անտառօգտագործման հետևյալ տեսակները,

2) բնափայտի մթերում,

3) ոչ բնափայտային անտառանյութի օգտագործում,

4) կենդանական աշխարհի վերարտադրություն և որստնտեսության կազմակերպում,

5) մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում,

6) անտառապատման կամ անտառվերականգնման նպատակներով անտառային հողերի օգտագործում,

7) անտառային տնկադաշտերի հիմնման նպատակով անտառային հողերի օգտագործում,

8) անտառային և տնկարանային տնտեսության կազմակերպման նպատակով անտառօգտագործում,

9) գիտահետազոտական նպատակներով անտառօգտագործում:

Հոդված 33. Բնափայտի մթերումը

1. Բնափայտի մթերումն իրականացվում է խնամքի, սանիտարական և այլ հատումների, իսկ հասուն և գերհասուն ծառուտներում՝ անտառվերականգնման հատումների միջոցով:

2. Բնափայտի մթերումն իրականացվում և տարեկան հաշվարկային հատատեղերը որոշվում են անտառկառավարման պլանների հիման վրա:

3. Բնափայտի մթերումը կարող է իրականացվել նաև անտառներում առաջացած հրդեհների, ինչպես նաև՝ տապալված ծառուտներում սանիտարական վիճակի բարելավման նպատակով, սանիտարական հատումներ իրականացնելու արդյունքում: Նման ծառուտներում բնափայտի մթերումն իրականացվում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ստեղծված մասնագիտական հանձնախմբի միջոցով, տեղում կատարված ուսումնասիրությունների և անտառապաթոլոգիական եզրակացությունների հիման վրա:

Հոդված 34. Ոչ բնափայտային անտառանյութի մթերումը

1. Անտառներում և անտառային հողերում, առանց անտառին վնաս պատճառելու, կարող են իրականացվել պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի, վայրի մեղրի և դեղաբույսերի, տեխնիկական հումքի մթերում, ինչպես նաև՝ մեղվանոցների, փեթակների տեղադրում, խոտհունձ և արածեցում:

2. Ոչ բնափայտային անտառանյութի օգտագործման համար հատկացված տարածքներում արգելվում են ծառերի հատումը, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող բույսերի հավաքումը:

3. Խոշոր և մանր եղջերավոր անասունների արածեցումն անտառածածկ տարածքներում արգելվում է:

Հոդված 35. Անտառօգտագործումը կենդանական աշխարհի վերարտադրության և որստնտեսության կազմակերպման նպատակով

1. Անտառները կամ անտառային հողերը կարող են օգտագործվել կենդանական աշխարհի տեսակների՝ օրենքով սահմանված կարգով վերարտադրության և որստնտեսության կազմակերպման նպատակով:

2. Կենդանական աշխարհի վերարտադրության և որստնտեսության կազմակերպման նպատակով անտառները կամ անտառային հողերն օգտագործման տրամադրվում են՝ պետական և համայնքային անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգի համաձայն:

3. Անտառօգտագործողների կողմից կենդանական աշխարհի վերարտադրության և որստնտեսության կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն Օրենսգրքով և «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 36. Անտառօգտագործումը մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով

1. Մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործումը մասնավորապես ներառում է՝

1) բնակչության հանգստի համար օգտագործվող անտառային տարածքներում ծառայությունների կազմակերպումը,

2) զբոսաշրջության, մարզական և մանկապատանեկան ճամբարների կազմակերպումը դրանց համար սահմանված կարգով առանձնացված անտառային հողերում,

3) որսորդությունը և ձկնորսությունը:

2. Մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով օգտագործվող տարածքներում պետք է պահպանվեն բնական լանդշաֆտները, կենդանական և բուսական աշխարհը, ջրային օբյեկտները:

3. Մշակութային, առողջարարական, սպորտի և զբոսաշրջության նպատակներով պետական և համայնքային անտառներն օգտագործման են տրամադրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 37. Անտառապատման կամ անտառվերականգնման նպատակներով անտառային հողերի օգտագործումը

1. Անտառապատման կամ անտառվերականգնման նպատակներով անտառային հողերի օգտագործումը կատարվում է անտառով չծածկված անտառային հողերում, ինչպես նաև այլ հողերում՝ անտառապատման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան:

Հոդված 38. Անտառային տնկադաշտերի հիմնման նպատակով անտառային հողերի օգտագործումը

1. Տնկադաշտերի հիմնումը կատարվում է անտառով չծածկված հողերում գեղազարդ տնկանյութի և կենսաէներգիայի կամ այլընտրանքային վառելիքի աղբյուր հանդիսացող արագաճ ծառաթփատեսակների աճեցման և իրացման նպատակով:

Հոդված 39. Անտառօգտագործումն անտառսերմնային և տնկարանային տնտեսության կազմակերպման նպատակով

1. Անտառսերմնային և տնկարանային տնտեսությունը վարվում է անտառվերականգնման և անտառապատման նպատակներով անտառային բարձրարժեք տնկանյութի աճեցման և որակյալ սերմերի ստացման ու մթերման համար:

Հոդված 40. Անտառօգտագործումը գիտահետազոտական և ուսուցման նպատակներով

1. Գիտահետազոտական և ուսուցման նպատակներով անտառների օգտագործումը գիտահետազոտական, փորձարարական, գիտաարտադրական աշխատանքների իրականացումն է այդ նպատակով հատկացված անտառային հողերում:

2. Գիտահետազոտական և ուսուցման աշխատանքներն իրականացնելու նպատակով հատկացված պետական և համայնքային անտառներում պետք է սահմանափակել կամ արգելել այլ նպատակներով իրականացվող անտառօգտագործումը, եթե այն անհամատեղելի է գիտահետազոտական աշխատանքների նպատակներին ու խնդիրներին:

Հոդված 41. Քաղաքացիների կողմից անտառների ընդհանուր օգտագործումը

1. Քաղաքացիներն իրավունք ունեն ազատորեն, առանց որևէ թույլտվության, գտնվելու պետության կամ համայնքի սեփականության ներքո գտնվող անտառներում՝ հանգստի, ոչ արդյունագործական նպատակով պտուղներ, հատապտուղներ, ընկույզներ, սնկեր, ուտելի բույսեր, վայրի մեղր և դեղաբույսեր հավաքելու համար՝ բացառությամբ օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

2. Քաղաքացիներն իրավունք չունեն առանց սեփականատիրոջ թույլտվության մուտք գործելու քաղաքացու կամ իրավաբանական անձի սեփականության ներքո գտնվող անտառը:

3. Քաղաքացիները պարտավոր են անտառներում պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, թույլ չտալ ծառերի և թփերի կոտրատում և հատումներ, անտառների աղտոտում, մրջնանոցների, թռչունների և կենդանիների բնատեղերի ոչնչացում և անտառային օրենսդրության այլ խախտումներ:

ԳԼՈՒԽ 11
ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 48. Պետական և համայնքային անտառային հողերի օգտագործման տրամադրումը

1. Անտառների կամ անտառային հողերի վարձակալության իրավունքը վարձակալության պայմանագրի պայմաններով վճարի դիմաց անտառների կամ անտառային հողերի ժամկետային օգտագործման իրավունքն է:

2. Պետական և համայնքային անտառների կամ անտառային հողերի վարձակալության իրավունքը տրամադրվում է հրապարակային սակարկությունների միջոցով:

3. Պետական անտառները կամ անտառային հողերը վարձակալության տրամադրելու հրապարակային սակարկությունները կազմակերպում է պետական կառավարման լիազորված մարմինը, իսկ համայնքային անտառները կամ անտառային հողերը վարձակալության տրամադրելու հրապարակային սակարկությունները՝ տեղական ինքնակառավարման մարմինը:

4. Անհատույց և առանց հրապարակային սակարկությունների պետական և համայնքային անտառային հողերը կարող են տրամադրվել անտառապատման և անտառվերականգնման նպատակներով, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բացառիկ դեպքերում, որի ժամկետը չի կարող գերազանցել վեց ամիսը:

5. Պետական և համայնքային անտառներից կամ անտառային հողերից բնափայտի մթերումը, ինչպես նաև ոչ բնափայտային անտառանյութի՝ պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի, վայրի մեղրի և դեղաբույսերի, տեխնիկական հումքի մթերումը, մեղվանոցների փեթակների տեղադրումը, խոտհունձը և արածեցումը՝ իրականացվում է առանց անտառային հողերի նկատմամբ վարձակալության իրավունքների ձեռքբերման, անտառօգտագործման պայմանագրի և/կամ անտառային տոմսի հիման վրա:

Հոդված 49. Պետական և համայնքային անտառների կամ անտառային հողերի վարձակալության ժամկետը

1. Անտառների կամ անտառային հողերի վարձակալության պայմանագիրը կնքվում է մինչև 60 տարի ժամկետով: Անտառային հողերի գյուղատնտեսական նպատակների համար նախատեսված հողատեսքերի վարձակալության պայմանագիրը կնքվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված ժամկետներով:

Հոդված 50. Վարձակալության պայմանագրի փոփոխումը և լուծումը

1. Վարձակալության պայմանագրի պայմանների փոփոխումը կողմերի անհամաձայնության դեպքում կատարվում է դատական կարգով, հետևյալ հիմքերով.

1) հրդեհների, քամիներից հողմահարման, վնասատուների և հիվանդությունների, երաշտի և սակավաջրության հետևանքով և այլ պատճառներով անտառային հողերի վիճակի վատթարացման դեպքում,

2) անտառօգտագործման կարգի և ռեժիմի սահմանված կարգի փոփոխության դեպքում:

2. Վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 51. Անտառների կամ անտառային հողերի օգտագործման իրավունքի դադարումը

1. Անտառների կամ անտառային հողերի օգտագործման իրավունքը դադարում է, երբ՝

1) լրացել է անտառօգտագործման պայմանագրի ժամկետը,

2) անտառօգտագործողը հրաժարվում է անտառօգտագործման իրավունքից,

3) առաջանում են անտառօգտագործման իրավունք տվող փաստաթղթերով նախատեսված պայմանների խախտումներ, որոնց առկայության դեպքում անտառօգտագործման հետագա իրականացումն անհնար է դառնում:

2. Անտառների և անտառային հողերի օգտագործման իրավունքը ժամկետից շուտ կարող է դադարեցնել սեփականատերը, երբ՝

1) անտառօգտագործման գոտում բնակվող մարդկանց կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ է սպառնում,

2) անտառօգտագործողները խախտում են անտառօգտագործման սահմանված կանոնները,

3) անտառօգտագործողը սահմանված ժամկետներում ձեռնամուխ չի եղել անտառների կամ անտառային հողերի օգտագործմանը նախատեսված ծավալների սահմաններում,

4) անտառօգտագործողը պայմանագրով սահմանված ժամկետներում չի մուծել անտառօգտագործման վճարը:

Հոդված 52. Անտառօգտագործման սահմանափակումները

1. Պետական և համայնքային սեփականություն համարվող անտառների կամ անտառային հողերից տրամադրված կամ այլ հիմքերով ձեռք բերված անտառների կամ

անտառային հողերի նկատմամբ օգտագործողների իրավունքները կարող են սահմանափակվել՝

1) վարձակալության կամ ենթավարձակալության հանձնելու արգելքով,

2) անտառներում և անտառային հողերում գտնվող պետական գեոդեզիական ցանցի կետերը պահպանելու պահանջով,

3) անտառօգտագործման առանձին տեսակների արգելքով,

4) բնապահպանական պահանջների պահպանման պահանջով,

5) բնության, պատմության և մշակույթի հուշարձանները, հնէաբանական օբյեկտները պահպանելու պայմանով,

6) վայրի կենդանիների գոյության, բնական միջավայրի և միգրացիայի ուղիների պահպանման պայմանով,

7) անտառկառավարման պլաններին չհամապատասխանելու դեպքերում,

8) այլ պարտավորություններով, սահմանափակումներով կամ պայմաններով:

2. Պաշտպանական նշանակության, ինչպես նաև քաղաքային և քաղաքամերձ, ռեկրեացիոն և առողջարարական, պատմական և գիտական արժեք ներկայացնող, սանիտարական գոտիները պահպանող անտառներում անտառվերականգնման հատումները արգելվում է: »:

Հոդված 14. Օրենսգրքի 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ և 47-րդ, հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 15. Օրենսգրքի 12-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 12
ԱՆՏԱՌՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 53. Անտառների հավատարմագրային կառավարման տրամադրումը

1. Անտառային տնտեսության վարման նպատակով պետական անտառները հավատարմագրային կառավարման պայմանագրով կարող են հանձնվել հավատարմագրային կառավաչին՝ մինչև 10 տարի ժամկետով: Համայնքային և մասնավոր անտառների հավատարմագրային կառավարման ժամկետը սահմանում են սեփականատերերը: Անտառի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Պետական և համայնքային անտառների հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է մրցույթի արդյունքում:»:

Հոդված 16. Օրենսգրքի 54-րդ և 55-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 15. Օրենսգրքի 57-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 57. Պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման միջոցառումների, ինչպես նաև անտառկառավարման պլանների, անտառվերականգնման և անտառապատման նախագծերի ֆինանսավորումը

1. Պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման, անտառային հրդեհների դեմ պայքարի միջոցառումները, ինչպես նաև անտառկառավարման պլանների, անտառվերականգնման և անտառապատման նախագծերի մշակման ֆինանսավորումը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում, կատարվող աշխատանքների ծախսերի նորմատիվներին համապատասխան, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 15. Օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն Օրենսգրքի 33-րդ հոդվածի երրորդ և 34-րդ հոդվածի երկրորդ մասերի պահանջներն իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփական անտառների նկատմամբ գործողության մեջ են դրվում անտառի շարք անցնելուց 10 տարի հետո:»:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Անհրաժեշտությունը՝ «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է.

1. որպես իրավական դրույթ ամրագրել այն հանգամանքը, որ անտառները կառավարվում են բնական միջավայրին համապատասխան, անտառային տարածքների հետևողական ընդլայնմամբ, անտառային պաշարների բնական, շարունակական և անսպառ օգտագործմամբ.

2. օրենքի նախագծում ներառված մի շարք հասկացություններ տրվում են նոր խմբագրությամբ, ինչպես նաև լրացվում է նոր հասկացություններով, իսկ որոշները ,որոնք ըստ էության չեն օգտագործվում օրենսգրքում, կամ հանդիսանում են կրկնություններ այլ իրավական ակտերի հետ՝ հանվեում են.

3. հստակեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության, անտառների կայուն կառավարման և վերահսկողության ոլորտում պետական լիազորված մարմինների, ինչպես նաև անտառների կայուն կառավարման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների, անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունները, միաժամանակ վերջինիս դեպքում ներկայումս լիազորություններ սահմանված չեն.

4. օրենքի նախագծում ամրագրվում է, որ Հայաստանի Հանրապետությունում անտառները և անտառային հողերն ունեն բազմագործառնական նշանակություն, որոնցից ոչ մեկը չի դիտարկվում իբրև գերիշխող, և դրանք կատարում են էկոհամակարգային ծառայություններ.

5. անտառների գործառնական նշանակությունը սահմանվում է անտառկառավարման պլաններով, բազմագործառնական գոտիավորման միջոցով.

6. տարանջատվել և հստակեցվել են անտառային ֆոնդի պետական հաշվառման և անտառային պետական կադաստրի վարման դրույթները: Հստակեցվել են անտառային տնտեսության վարման սկզբունքները: Անտառային տնտեսության վարումն իրականացնելու համար նախատեսվում են երկարաժամկետ և տարեկան գործողությունների պլանների առկայություն.

7. պետական և համայնքային անտառածածկ տարածքներում արգելվում է բաց եղանակով հանքավայրերի շահագործումը.

8. ամրագրվել է ժամկետ, որի ընթացքում ծառազրկված անտառային հողերում պետք է իրականացվի անտառվերականգնման աշխատանքներ, նախապես ունենալով անտառվերականգնման նախագծեր.

9. հստակեցվել և լրացվել են անտառօգտագործման տեսակներն անտառներում և անտառային հողերում:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության Անտառային օրենսգիրքն ընդունվել է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին և մինչ օրս լրացումների և փոփոխությունների չի ենթարկվել, որի համար հիմքերն այսօր բազմաթիվ են, մասնավորապես՝ պետական անտառների անտառկառավարման պլանները ներկայումս հաստատվում են պետական լիազորված մարմնի կողմից, իսկ անտառկառավարման միջոցառումների իրականացման տարեկան գործողությունների պլանների մշակման վերաբերյալ պահանջ չկա, մինչդեռ անտառային տնտեսության վարումն առավել արդյունավետ և կայուն կառավարելու համար անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի պետական անտառների անտառկառավարման պլանները հաստատվեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, իսկ դրանցից բխող տարեկան գործողությունների պլանները՝ պետական լիազորված մարմնի:

Անտառների կայուն կառավարման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները բավականին ընդհանրացված են և բացակայում է հստակությունը, իսկ անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման տարածքային մարմինների համար ընդհանրապես լիազորություններ չեն սահմանվում, մինչդեռ բացի պետական անտառներից ՀՀ անտառային օրենսգրքով սահմանվում են նաև համայնքային անտառների վերաբերյալ դրույթներ:

ՀՀ անտառային օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանվում են ըստ հիմնական նպատակային նշանակության անտառների դասակարգման դրույթներ, որը հակասության մեջ է գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, մասնավորապես՝ անտառային հողերի գործառնական նշանակությունը սահմանվում է ՀՀ անտառային օրենսգրքով: Բացի նշվածից ՀՀ անտառային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվում է, որ ըստ հիմնական նպատակային նշանակության՝ անտառների դասակարգման կարգը սահմանի ՀՀ կառավարությունը, ինչը գործնականորեն հնարավոր չէ:

ՀՀ անտառային օրենսգրքում բացակայում են անտառային տնտեսության վարման իրականացումն ապահովող դրույթներ, ինչպես նաև այնպիսի կարևոր սահմանափակումներ, որոնք կխոչընդոտեն անտառային հողերի տարածքների կրճատմանը:

ՀՀ անտառային օրենսգրքում չեն նախատեսվում անտառային տնկադաշտերի հիմնման, անտառային և տնկարանային տնտեսության կազմակերպման նպատակներով անտառօգտագործման դրույթներ և այլն:

Վերոնշյալ և մի շարք այլ խնդիրներ հաշվի առնելով ԳՄՀԸ ԿԿԿ ծրագրի շրջանակներում վերանայվել և անտառների կայուն կառավարման միջազգային ստանդարտներին համապատասխան առաջարկություններ է ներկայացվել միջազգային փորձագետի կողմից, որոնք ևս հաշվի են առնվել սույն նախագծի մշակման ժամանակ:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝ «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը նպատակաուղղված է գործող քաղաքականության իրականացմանը:

Անտառային տնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականությունը ուղղված է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործմանը:

Կարգավորման նպատակը և բնույթը՝ «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը նպատակաուղղված է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև անտառային տարածքների կրճատման խոչընդոտմանը, անտառների բազմագործառնական նշանակության դասակարգմանը և ըստ այդմ անտառի կառավարման ուղղությունների տարանջատմանն ու հստակեցմանը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն,
2. ԳՄՀԸ ԿԿԿ ծրագիր:

Ակնկալվող արդյունքը՝ անտառային ոլորտի իրավական դաշտի կատարելագործում, լիազորությունների հստակեցում, անտառային տնտեսության վարման համակարգի բարեփոխում:

Իրավական ակտի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին

«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը տեղադրված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ինտերնետային կայքում՝ http://www.minagro.am/ հասցեով, հասարակությանն իրազեկելու նպատակով:

Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը

«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա օրենքից բխող որոշ իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական նվազեցում չի առաջանում: